Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա.Թաքիազյան

«Աշխարհագրություն»

7-րդ դասարան
(68 դասաժամ, շաբաթական 2 ժամ)

Ուսուցիչ՝ Սոնյա Հարությունյան

Առաջին կիսամյակ /30 դասաժամ/

N	Թեմա: Դաս	Աղբյուրը	Էջեր	Վերջնարդյունքներ	
Թ-1	ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ				(8 ժամ)
1.	Ներածություն: Ի՞նչ է ուսումնասիրում աշխարհագրությունը	Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ	1-2	• *Բացատրել* «աշխարհագրություն» բառի իմաստը: • *Ներկայացնել* աշխարհագրական գիտելիքների անհրաժեշտությունը: • *Ներկայացնել* աշխարհագրական գիտության ճյուղային կառուցվածքը:	**1**
2.	Տեղանքի հատակագիծ: Մասշտաբ: Կողմնորոշում հատակագծով	Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ	3-6	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • *Բնորոշել* որևէ օբյեկտի կամ տեղանքի հատակագիծը: • *Արտահայտել* միևնույն մասշտաբը տարբեր՝ թվային, գծային կամ անվանական եղանակներով, համեմատել քարտեզները՝ ըստ մասշտաբի: • Կատարել չափումներ և հաշվարկներ տարբեր մասշտաբների քարտեզներում:	1
3.	*Գործնական աշխատանք:* Տեղանքի հատակագծի կազմումը	Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ	6-11	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • *Կազմել* որևէ փոքր տեղանքի մոտավոր հատակագիծը՝ օգտագործելով համապատասխան պայմանական նշաններ:	1

4.	Աշխարհագրական քարտեզ: Քարտեզների դասակարգումն ըստ բովանդակության, մասշտաբի և տարածքի ընդգրկման	Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ	11-13	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • Սահմանել քարտեզ և ատլաս հասկացությունները: • Դասակարգել քարտեզները ըստ մասշտաբի, բովանդակության և նշանակության • Բացատրել քարտեզի և հատակագծի տարբերություններն ու նմանությունները • Ներկայացնել աշխարհագրական քարտեզների նշանակությունը մարկանց համար:	1
5.	Աստիճանացանց: Աշխարհագրական կոորդինատներ	Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ	14-16	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • Սահմանել միջօրեական, զուգահեռական և աստիճանացանց հասկացությունները: • Բնորոշել աշխարհագրական երկայնությունը և աշխարհագրական լայնությունը: • Որոշել կամայական կետի աշխարհագրական կոորդինատները քարտեզի վրա:	1
6.	Աշխարհագրական պրոյեկցիաներ. կոնային, գլանային, ազիմուտային: Պայմանական նշաններ	Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ	17-18	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • Ներկայացնել երկրագունդը հարթության վրա պատկերելու եղանակները: • Բացատրել պայմանական նշանների	1

				նշանակությունը:	
7.	*Գործնական աշխատանք:* Քարտեզագրական պատկերման եղանակներ (որակական ֆոն, գծային նշաններ, իզոգծեր, արեալներ, քարտեզագրամներ)	Թեմա 1, սովորողի ուսումնական նյութ	19-23		1
8.	«Աշխարհագրական քարտեզ» թեմայի ամփոփում: *Հարցեր և առաջադրանքներ(թեմատիկ գրավոր աշխատանք):*		-		1
Թ-2	**ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ: ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**				**(8 ժամ)**
9.	Աշխարհագրական թաղանթ. կառուցվածքը, հատկանիշները	Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ	1-3	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • Ներկայացնել աշխարհագրական թաղանթի կառուցվածքը և գլխավոր հատկանիշները:	1
10.	Երկրակեղևի կառուցվածքը, զարգացումը, սալերն ու դրանց շարժումը: Երկրաբանական դարաշրջաններ	Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ	3-6	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • Ընդհանուր գծերով *բնորոշել* երկրաբանական տարբեր դարաշրջաններում երկրագնդի զարգացման գլխավոր գործընթացները: • *Բացատրել* պլատֆորմի առաջացումը և գեոսինկլինալի զարգացման փուլերը: *Հասկանալ*, որ երկրակեղևի փոփոխման գործընթացներով է պայմանավորված երկրակեղևի տվյալ հատվածի ներքին կառուցվածքը, ապարների կազմը, մակերևույթը:	1

11.	Մայրցամաքներ: Երկրագնդի խոշոր պլատֆորմներն ու գեոսինկլինալային շրջանները: Լեռնագոյացում	Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ	7-10	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • Թվարկել երկրաբանական վաղ անցյալի գերմայրցամաքները, առանձնացնել ժամանակակից մայրցամաքներն ու օվկիանոսները: • Միևնույն մասշտաբի քարտեզների վրա պատկերված ժամանակակից մայրցամաքների ուրվագծերի համադրմամբ *վերստեղծել* երկրաբանական անցյալում գոյություն ունեցած միասնական մեգամայրցամաքի պատկերը: • Երկրագնդի երկրաբանական քարտեզով *գտնել* պլատֆորմների և գեոսինկլինալների տարածման շրջանները, բեկվածքները:	1
12.	Երկրի մակերևույթի մարդածին փոփոխությունները	Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ	11-14	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* *Բացատրել* մարդածին գործոնների ազդեցությամբ Երկրի մակերևույթի վրա առաջացած փոփոխությունները, *բնորոշել* մակերևույթի ձևերի ազդեցությունը մարդու գործունեության վրա:	1
13.	Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը	Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ	14-17	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • *Ներկայացնել* Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը:	1
14.	Համաշխարհային օվկիանոսի ջրի ջերմությունն ու աղիությունը	Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ	17-19	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • *Բացատրել* Համաշխարհային օվկիանոսի	1

				ջրի ջերմության և աղիության փոփոխության օրինաչափությունները և առանձին մասերում դրանց առանձնահատկությունները:	
15.	Ջրի շարժումը Համաշխարհային օվկիանոսում: Մակընթացություն և տեղատվություն	Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ		*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • *Ներկայացնել* տարբեր օվկիանոսների կարևոր սառը և տաք հոսանքները: • *Բացատրել* մակընթացության և տեղատվության երևույթը:	1
16.	«Երկրի մակերևույթի ձևավորում: Համաշխարհային օվկիանոսի աշխարհագրական առանձնահատկությունները» թեմայի ամփոփում: *Հարցեր և առաջադրանքներ (թեմատիկ գրավոր աշխատանք):*	Թեմա 2, սովորողի ուսումնական նյութ	20-24		1
Թ-3	**ԵՂԱՆԱԿ ԵՎ ԿԼԻՄԱ: ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՆԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**				**(12 ժամ)**
17.	Եղանակ, եղանակաստեղծ տարրերը: Օդի ջերմաստիճանի չափումը և ընթացքը: Ջերմության անհավասարաչափ բաշխումը Երկրի վրա		1-5	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • Ներկայացնել եղանակաստեղծ տարրերը և դրանց փոխադարձ կապերով պայմանավորված եղանակի փոփոխությունները: • Բացատրել օդի ջերմաստիճանի օրական և տարեկան ընթացքը, հաշվել օդի միջին օրական, տարեկան, ամսական ջերմաստիճանները, դրանց տատանման լայնույթը:	1

18.	Մթնոլորտային ճնշում. չափումը, փոփոխությունները: Քամի (ուժը, ուղղությունը և արագությունը): Տեղական քամիներ (բրիզ, լեռնահովտային քամիներ): Քամիների վարդ	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	6-12	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • *Բացատրել* մթնոլորտային ճնշման փոփոխությունը, տեղական քամիների առաջացումը: • *Բնորոշել* քամու ուժը, արագությունը, ուղղությունը՝ դրանք ցույց տալով հողմացույցի վրա: • *Կառուցել* քամիների վարդ (ցանկալի է կոնկրետ բնակավայրի մոտ գտնվող օդերևութաբանական կայանի տվյալների հիման վրա): • *Բացատրել* բրիզների և լեռնահովտային քամիների առաջացման մեխանիզմը: *Բացատրել* գերիշխող քամիների և մուսսոնների առաջացման մեխանիզմը, *գնահատել* դրանց ազդեցությունը մայրցամաքների և օվկիանոսների կլիմայի վրա:	1
19.	Մթնոլորտի խոնավությունը (բացարձակ և հարաբերական խոնավություն): Մթնոլորտային տեղումների բաշխումը երկրագնդի վրա	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	13-16	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • *Սահմանել* մթնոլորտի բացարձակ խոնավություն և մթնոլորտի հարաբերական խոնավություն հասկացությունները, տրված տվյալներով *լուծել* խնդիրներ օդի հարաբերական և բացարձակ խոնավության վերաբերյալ: • *Բացատրել* երկրագնդի վրա մթնոլորտային տեղումների անհավասարաչափ տեղաբաշխ-	1

				ման պատճառները:	
20.	*Գործնական աշխատանք*	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	2	• Լուծել խնդիրներ օդի ջերմաստիճանի, մթնոլորտային ճնշման փոփոխությունների վերաբերյալ: • Ուրվագծային քարտեզի վրա գծանշել և որակական ֆոնի եղանակով պատկերել երկրագնդի ջերմային գոտիները: • Ստվերարկել երկրագնդի ուրվագծային քարտեզի (կիսագնդերի քարտեզ) վրա մթնոլորտային ճնշման գոտիները: • Շարժման գծերի միջոցով նշել պասսատները, արևմտյան և արկտիկական (անտարկտիկական) քամիները:	1
21.	Կլիմա: Կլիմաստեղծ գործոնները	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	17-20	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • *Բնորոշել* կլիմա հասկացությունը, • *բացատրել* կլիմաստեղծ գործոնները: • *Բացատրել* իր բնակավայրի կլիմաստեղծ գործոնները և կլիմայի սեզոնային փոփոխությունները: • *Բացատրել* աշխարհագրական տարբեր լայնություններում օդի ջերմաստիճանների տարբերության գլխավոր պատճառը: • *Բացատրել* տարվա ընթացքում Արեգակի ճառագայթների անկման անկյան փոփոխությունը: • Օրինակներով *բացատրել* կլիմայի ազդեցությունը մարդու առօրյա գործունեության վրա:	1

22.	Կլիմայի հիմնական տիպերը: Կլիմայական դիագրամներ (կլիմագրամներ)	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	20-24	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • *Բնորոշել* և *համեմատել* կլիմայի հիմնական տիպերը: • Տրված տվյալների հիման վրա *կառուցել* որևէ վայրի կլիմայական դիագրամ՝ *նշելով* դրա գտնվելու կլիմական գոտին, մարզը:	1
23.	Երկրի տարեկան պտույտը: Կլիմայական եղանակների առաջացումը	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	25-28	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • *Բացատրել* աշխարհագրական տարբեր լայնություններում օդի ջերմաստիճանների տարբերության գլխավոր պատճառը: • *Բացատրել* տարվա ընթացքում Արեգակի ճառագայթների անկման անկյան փոփոխությունը:	1
24.	Մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը: Օդային զանգվածներ	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	28-31	• Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • Թվարկել մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը պայմանավորող գործոնները, • Բնորոշել օդային զանգվածի հիմնական հատկանիշները, • Ներկայացնել օդային զանգվածների հիմնական տիպերի աշխարհագրական տարածումն ու գլխավոր հատկանիշները:	1
25.	Կլիմայական գոտիներ և մարզեր, դրանց առանձնացումը	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	31-33	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • *Առանձնացնել* և *համեմատել* հիմնական և անցումային կլիմայական գոտիները, *համեմատել* կլիմայական մարզերի հիմնական	1

				բնութագրիչները:	
26.	Հորիզոնական (լայնակի) զոնայականություն, վերընթաց գոտիականություն	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	34-37	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • Բնորոշել բնատարածքային համալիրը: • *Համեմատել* տարբեր բնական զոնաների բուսական և կենդանական աշխարհը:	1
27.	Բնական զոնաներ, դրանց աշխարհագրական տարածումը: Բնատարածքային համալիրներ	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	38-42	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ • *Համեմատել* տարբեր բնական զոնաների բուսական և կենդանական աշխարհը: • *Բացատրել* արևադարձային անտառների պահպանության հիմնախնդիրը կայուն զարգացման համատեքստում:	1
28.	«Եղանակ և կլիմա: Աշխարհագրական զոնայականություն և գոտիականություն» թեմայի ամփոփում: *Հարցեր և առաջադրանքներ (թեմատիկ գրավոր աշխատանք)*	Թեմա 3, սովորողի ուսումնական նյութ	42-43		1
29.	Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք				1
30.	Ամփոփում				1
Երկրորդ կիսամյակ / 38 դասաժամ /					
Թ-4	**ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ**				**(3 ժամ)**
31.	Աշխարհի քաղաքական բաժանումը: Քաղաքական քարտեզ	Թեմա 4, սովորողի ուսումնական նյութ	1-4	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • Սահմանել քաղաքական քարտեզ հասկա-	1

				ցությունը և կիրառել քաղաքական քարտեզը տեղեկություններ ստանալու համար: • Բացատրել աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխման պատճառները:	
32.	Պետական տարածք և պետական սահման: Պետության տարածքի ձևը	Թեմա 4, սովորողի ուսումնական նյութ	4-7	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • *Ներկայացնել* պետական տարածքի և սահմանի տեսակները: • *Բացատրել* պետության բացառիկ տնտեսական գոտու էությունը: • *Համեմատել* պետություններն ըստ տարածքի ձևի: • *Սահմանել* անկլավ և էքսկլավ հասկացություններն և բերել օրիակներ:	1
33.	Պետությունների խմբավորումը	Թեմա 4, սովորողի ուսումնական նյութ	8-11	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • *Դասակարգել* պետություններն ըստ քանակական և որակական հատկանիշների: • *Համեմատել* հանրապետական և միապետական կառավարման, ունիտար (միասնական) և դաշնային պետական կառուցվածքի ձևերի էական հատկանիշներն ու քարտեզի վրա *ցույց տալ* այդպիսի երկրներ: • *Համեմատել* պետությունները՝ ըստ զարգացման մակարդակի:	1
Թ-5	**ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**				**(8 ժամ)**
34.	**Աշխարհի բնակչության թիվը և շարժը**	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ,	22-26	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* • Բնորոշել բնակչություն, բնական և մեխանիկական շարժ, վերարտադրության ռեժիմ,	1

		2018		միգրացիա, ժողովրդագրական քաղաքականություն, բնակչության կազմ, տեղաբաշխում, տարաբնակեցում հասկացությունների էությունը: ● Ներկայացնել բնակչության թվի փոփոխությունների պատճառները:	
35.	Բնակչության վերարտադրությունը: Ժողովրդագրական քաղաքականություն	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	26-30	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Թվարկել և բացատրել ծնելիության և մահացության վրա ազդող գործոնները, համեմատել դրանք զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում: ● Ներկայացնել բնակչության բնական վերարտադրության ռեժիմները: ● Բացատրել ժողովրդագրական քաղաքականության առանձնահատկությունները՝ ըստ բնակչության բնական վերարտա-դրության ռեժիմների:	1
36.	Բնակչության տեղաբաշխումը: Միգրացիաներ	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	30-35	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● *Ներկայացնել* բնակչության տեղաբաշխման օրինաչափություններն ու կուտակման գլխավոր արեալներն աշխարհում: ● *Ներկայացնել* միգրացիայի էությունը, տեսակները:	1

37.	Աշխարհի բնակչության կազմ. սեռատարիքային կազմ: Աշխատանքային ռեսուրսներ	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	35-39	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● *Ներկայացնել* բնակչության կազմի տեսակները (սեռային, տարիքային (աշխատանքային ռեսուրսներ), և *բացատրել* դրանց աշխարհագրական առանձնահատկությունները: ● *Համեմատել և վերլուծել* առնվազն երկու տարբեր տիպի պետությունների սեռատարիքային բուրգերը: ● *Վերլուծել* երիտասարդ և ծերացող բնակչություն ունեցող երկրների հիմնական խնդիրները: ● *Բնորոշել* աշխատանքային ռեսուրսները՝ ըստ որակական և քանակական ցուցանիշների: ● *Համեմատել* բնակչության զբաղվածության կառուցվածքը տարբեր տիպի երկրներում:	1
38.	Բնակչության ռասայական, էթնիկական (ազգային), կրոնական կազմ	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	39-45	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● *Ներկայացնել* բնակչության կազմի տեսակները (ռասայական, ազգային (էթնիկական), կրոնական, լեզվական) և *բացատրել* դրանց աշխարհագրական առանձնահատկությունները:	1

				● Ցուցաբերել հանդուրժողականություն բնակչության ռասայական, ազգային (էթնիկական) և կրոնական տարբերությունների նկատմամբ: ● Բացառել մարդու արտաքին հատկանիշների և մտավոր կարողությունների գերարժևորման և թերարժևորման ընկալումները:	
39.	Տարաբնակեցում: Քաղաքային և գյուղական բնակավայրեր	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	46-51	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● *Ներկայացնել* տարաբնակեցման հիմնական ձևերը (քաղաքային և գյուղական), դրա աշխարհագրական պատկերը: ● *Բացատրել* քաղաքներում բնակչության կենտրոնացման գործընթացի արդի միտումները: ● *Լուծել* բնակչության աշխարհագրության վերաբերյալ մաթեմատիկական խնդիրներ:	1
40.	Գործնական աշխատանք	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	52		1
41.	«Աշխարհի բնակչության աշխարհագրությունը» թեմայի ամփոփում	-	-	-	1
42.	«Աշխարհի բնակչության աշխարհագրությունը» և «Աշխարհի քաղաքական բաժանումը» թեմաներից գրավոր աշխատանք	-	-	-	1

Թ-6	**ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (ՏԵՍԱԿՆԵՐ, ԽՄԲԵՐ)**				**(2 ժամ)**
43.	Բնական պայմաններ և ռեսուրսներ: Բնական ռեսուրսների խմբավորումը: Ռեսուրսապահովվածություն:	Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ	1-4	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Բնորոշել բնական պայմաններ և բնական ռեսուրսներ հասկացությունները, դրանց էությունը, տարբերություններն ու առանձնահատկությունները: ● Դասակարգել բնական ռեսուրսներն ըստ ծագման, ըստ սպառման: ● Կատարել ռեսուրսապահովվածության հաշվարկներ:	1
44.	Աշխարհի բնական ռեսուրսների հիմնական խմբերը (հողային, հանքային, ջրային, կլիմայական, Համաշխարհային օվկիանոսի, կենսաբանական, ռեկրեացիոն), դրանց տեղաբաշխումը:	Թեմա 6, սովորողի ուսումնական նյութ	5-9	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● *Քարտեզի վրա ցույց տալ* բնական ռեսուրսների հիմնական խմբերի աշխարհագրական տեղաբաշխումն ու *բացատրել* դրա սոցիալ-տնտեսական ազդեցությունները կոնկրետ օրինակով: ● *Գնահատել* աշխարհի հողային ռեսուրսներն ըստ նշանակության: ● *Ներկայացնել* ջրային ռեսուրսների օգտագործման, քանակական և որակական սպառման առանձնահատկությունները տնտեսության տարբեր ճյուղերում: ● *Գնահատել* կենսաբանական ռեսուրսների	1

				դերը մարդկության կենսագործունեության համար: ● *Բնութագրել* ռեկրեացիոն ռեսուրսները:	
Թ-7	**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**				**(18 ժամ)**
45.	Ազգային տնտեսություն	Թեմա 7, սովորողի ուսումնական նյութ	1-3	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Բնորոշել ազգային տնտեսությունը, դրա զարգացման փուլերը, ճյուղային և տարածքային կառուցվածքը:	1
46.	Աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանում	Թեմա 7, սովորողի ուսումնական նյութ	4-7	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Բնորոշել աշխատանքի աշխարհագրական (տարածքային), միջշրջանային, միջազգային բաժանումը, միջազգգյին արտադրական մասնագիտացումը և կոոպերացիան:	1
47.	Համաշխարհային տնտեսություն	Թեմա 7, սովորողի ուսումնական նյութ	7-9	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Սահմանել համաշխարհային տնտեսություն հասկացությունը, բացատրել ձևավորման նախադրյալները: ● Բնութագրել տնտեսության ոլորտներն ու համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը:	2
48.	Արդյունաբերությունը. ընդհանուր բնութագիրը և տեղաբաշխումը	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ,	79-82	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Բնութագրել աշխարհի արդյունաբերության ճյուղային	1

		2018		կառուցվածքը, բացատրել արդյունաբերության գլխավոր ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները:	
49.	Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	82-92	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Բնութագրել վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացման փուլերը, վառելիքային արդյունաբերության և էներգետիկայի ճյուղային կառուցվածքը: ● Գնահատել էներգիայի ոչ ավանդական աղբյուրների նշանակությունը:	1
50.	Մետաղաձուլություն և մեքենաշինություն	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	92-100	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Բնորոշել մետաղաձուլության ճյուղային կառուցվածքը, ներկայացնել մետաղները՝ ըստ խմբերի: ● Բացատրել մեքենաշինության դերը ժամանակակից տնտեսության մեջ, ներկայացնել ճյուղային կառուցվածքը:	1
51.	Քիմիական, թեթև և սննդի արդյունաբերություն	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	92-100	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Բացատրել քիմիական արդյունաբերության դերը ժամանակակից տնտեսության մեջ, ներկայացնել տեղաբաշխման առանձնահատկությունները: ● Ներկայացնել թեթև և սննդի արդյունաբերության հումքային բազան, դրանց տեղա-	1

				բաշխման առանձնահատկությունները:	
52.	*Համաշխարհային և ազգային տնտեսություն: Արդյունաբերություն ենթաթեմայի կրկնություն*	-	-	-	1
53.	Գյուղատնտեսությունը. ընդհանուր բնութագիրը	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	106-110	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● *Բացատրել* համաշխարհային տնտեսության կառուցվածքում գյուղատնտեսության նշանակությունը, *նշել* գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման ուղղությունները: ● *Բացատրել* գյուղատնտեսության դերը երկրների տնտեսության մեջ: ● *Ներկայացնել* գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը և զարգացման ուղղությունները:	1
54.	Բուսաբուծություն	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	110-119	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● *Բնութագրել* բուսաբուծության ճյուղային կառուցվածքը և տեղաբաշխման առանձնահատկությունները:	1
55.	Անասնապահություն	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	119-125	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● *Բնութագրել* անասնապահության ճյուղային կառուցվածքը և տեղաբաշխման առանձնահատկությունները:	1
56.	Ձկնորսություն և ձկնաբուծություն, ան-	Ռ. Մարգարյան և	125-129	*Թեմայի նպատակին հասնելու համար*	1

	տառային տնտեսություն և որսորդություն	ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018		*սովորողը պետք է կարողանա՝* ● *Բացատրել* ձկնորսության և ձկնաբուծության, անտառային և որսորդության տնտեսական նշանակությունը, դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները:	
57.	Տրանսպորտ և կապ	Թեմա 7, սովորողի ուսումնական նյութ	11-16	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ ● Համեմատել համաշխարհային տրանսպորտի հիմնական տեսակների ցուցանիշներն ու տեղաբաշխման առանձնահատկությունները: ● Հաշվել տրանսպորտային ցանցի խտությունը, ուղևորաշրջանառությունը և բեռնաշրջանառությունը:	2
58.	Միջազգային տրանսպորտային գլխավոր ուղիները	Թեմա 7, սովորողի ուսումնական նյութ	16-20	*Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝* ● Ներկայացնել կարևոր միջազգային տրանսպորտային ուղիները, ծովային ջրանցքներն ու նեղուցները, դրանց նշանակությունը միջազգային բեռնափոխադրումներում:	1
59.	*Գործնական աշխատանք*	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ, 2018	157-160	-	1
60.	Ոչ արտադրական ոլորտի ճյուղեր	Ռ. Մարգարյան և ուրիշ., Աշխարհագրություն 7, Եր., ՄԱՆՄԱՐ,	142-146	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ ● *Նկարագրել* ոչ արտադրական ոլորտի	1

		2018		ճյուղային կառուցվածքը, *գնահատել* ոչ արտադրական ոլորտի դերը հասարակության կյանքում: ● *Բնորոշել* ոչ արտադրական ոլորտի առանձնահատկությունները զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում:	
61.	Միջազգային տնտեսական հարաբերություններ	Թեմա 7, սովորողի ուսումնական նյութ	21-25	Թեմայի նպատակին հասնելու համար սովորողը պետք է կարողանա՝ ● Բացատրել միջազգային տնտեսական հարաբերությունների նշանակությունը, ներկայացնել դրանց հիմնական ձևերը: ● Սահմանել արտաքին առևտրի հաշվեկշիռ հասկացությունը:	1
62.	«Համաշխարհային տնտեսությունը» թեմայի ամփոփում	Թեմա 7, սովորողի ուսումնական նյութ	25-26	-	1
63.	«Համաշխարհային տնտեսությունը» (թեմատիկ գրավոր աշխատանք)	-	-	-	1
64.	Կրկնություն				1
65.	Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք				1
66.	Ամփոփում				1

67.[1]	Ուսումնական նախագիծ (կլիմայի հետազոտում որևէ մայրցամաքի օրինակով)				Կամ
68.	Ուսումնական նախագիծ (մակերևույթի ձևավորման և ռելիեֆի խոշոր ձևերի ուսումնասիրում որևէ մայրցամաքի օրինակով)				Կամ
69.	Ուսումնական նախագիծ (տնտեսության որևէ ճյուղի տեղաբաշխման և մասնագիտացման ուսումնասիրում, ժամանակակից միտումների բացահայտում՝ համացանցի ռեսուրսներից նպատակային օգտվելու և հավաքված տեղեկույթը համակարգված ներկայացնելու հմտությունների զարգացում)				կամ

[1] Տրված ուսումնական նախագծերը ընդամենը օրինակներ են և ուսուցչի կողմից կարող են փոփոխվել ամբողջությամբ՝ կախված տարբեր հանգամանքներից: